

ԲԱՐԿՆՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ. *Քաղաքները և արհեստները Հայաստանում* (IX—XIII դդ.), հատ. 1, Երևան, 1958, 376 էջ+LXXVI, գիրք՝ 3 ու., հատ. II, Երևան, 1964, 320 էջ+LII, գիրք՝ 2 ու., 20 կ.:

Ինչպես հայտնի է, IX դարը հանդիսացավ ոչ միայն Հայաստանի, այլև ողջ Կովկասի համար արարական բռնակետությունից աստիճանարար ազատագրվելու դար. մեկը մյուսի հետևից վերականգնվեցին վրաց, հայոց և աղվանից վաղուց խորտակված թագավորությունները: Ֆեոդալական հարաբերությունները, որ վաղուց էին արմատավորվել Հայաստանում և արտաքին ուժերի խորտակիչ ներգործությամբ կաշկանդվել ու լճացել, արարական տիրապետության թուլացմանը և նրա դեմ մղվող ազատագրական պայքարի հզորացմանը զուգընթաց, դեռևս դարասկզբից, սկսել էին վերադասավորվել ու աշխուժանալ: Բազրատունյաց յոհնմի հաղթանակը և պետական ինքնուրույնության վերականգնումը բարենպաստ պայմաններ ստեղծեցին, որպեսզի հասարակական այդ հարաբերությունները կարճ ժամանակամիջոցում թևակոխեն իրենց զարգացման շրջանը: Ծիշտ է, այդ բարենպաստ պայմաններն էլ երկարատև շեղան, երկիրը ենթարկվեց նորանոր ներխուժումների, այնուամենայնիվ, մինչև XIII—XIV դարերը հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցան ներքին խոշոր տեղաշարժեր, որոնք իրենց անջնջելի դրոշմը դրին նրա պատմա-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի բոլոր բնագավառների վրա:

Ահա այդ ժամանակամիջոցումն էր, որ ծրվեցին ֆեոդալական հարաբերությունների գրուխ-գործոցները՝ քաղաքները՝ իրենց ներքին բարդ ու նորորակ ներաշխարհով: Եվ այդ երկվույթի ուսումնասիրությանն է, որ նվիրված է Բ. Առաքելյանի «Քաղաքները և արհեստները Հայաստանում (IX—XIII դդ.)» մենագրությունը:

Ծիշտ է, հայկական միջնադարյան քաղաքների պատմությանը, ինչպես նաև նրանց հետ կապված արհեստներին, առևտրին և այլ խրնչիրներին շատ մասնագետներ են անդրադարձել, սակայն դեռևս գոյություն չունեն այդ ամենի հիման վրա շարադրված մի համապարփակ ուսումնասիրություն, որը նպատակ ունենար գիտության այսուրվա նվաճումների և եզած

առանձին նյութերի օգնությամբ ամբողջական խոսք ասել այդ բնագավառի մասին:

Կրախոսվող գրքի երկու հատորների բովանդակած խնդիրներն այնքան սերտորեն են կապակցված, որ անհնար է խոսել նրանցից մեկի մասին, զանց առնելով մյուսը: Ուստի վերջերս հրատարակված հատորին անդրադառնալու առիթը հարկադրում է խոսել նաև առաջինի մասին:

Եթե փորձելու լինենք խմբավորել այդտեղ թնկված հարցերը, ապա կստանանք հետևյալ պատկերը.

ա) Հայկական ֆեոդալական քաղաքների ծագումը, զարգացումը և անկումը յուրաքանչյուր քաղաքի վերաբերյալ համառոտ պատմական ակնարկով (հատոր I, էջ 25—70, 71—128 և հատոր II, էջ 68—118, 265—290):

բ) Արհեստները, նրանց տեսակները: Աշխատանքի բաժանումը և համբարությունները (հատոր I, էջ 129—345, 346—353 և հատոր II, էջ 174—205):

գ) Ապրանքային արտադրության և առևտրի զարգացումը քաղաքներում (հատոր II, էջ 5—67):

դ) Քաղաքների սոցիալական կառուցվածքը, հասարակական-տնտեսական ներքին փոխհարաբերությունները և դասակարգային պայքարը (հատոր II, էջ 121—173, 206—262):

Ինչպես նշված է մենագրության խորագրում, հեղինակն այդ բոլոր խնդիրները թնկում է IX—XIII դարերին վերաբերող ժամանակամիջոցում: Այս ամփոփ ցանկը ցույց է տալիս, որ նա իր առջև դրել է այն բոլոր արմատական խնդիրները, որոնք ներկայացնում են ուսումնասիրվող բնագավառի պատմա-քաղաքական և սոցիալ-տնտեսական իրադրությունների առավել ամբողջական պատկերը:

Այս հաստատուն հիմքի վրա իր հետազոտությունների շնորք կառուցելիս Բ. Առաքելյանն օգտագործել է, ամենից առաջ, ուսումնասիրվող քաղաքների պեղումներից ստացված և նրանց տեղերում կանգուն մնացած ննարավոր բոլոր հուշարձանները, վիճակի արձանագրու-

թյունները, սկզբնաղբյուրներում նրանց մասին պահպանված վկայությունները, մասնագիտական գրականությունը, ինչպես նաև օժանդակ բազմաթիվ ու բազմապիսի աղբյուրներ: Նույն խնդիրներին վերաբերող, սակայն տարբեր մասնագիտությունների պատկանող այս նյութերը հաղթահարված են հավասարապես, հանգամանք, որը ցույց է տալիս հեղինակի՝ որպես պատմաբանի, հնագետի, ազգագրագետի, բանասերի, աղբյուրագետի հմտությունն ու կարողությունները: Այս ամբողջի միջով, որպես ստեղծագործական-գաղափարական ընդհանուր առևնք, անցնում է հեղինակի մշակած կոնցեպցիան հայկական միջնադարյան (IX—XIII դդ.) քաղաքների և նրանց ներքին կյանքի ուսումնասիրության վերաբերյալ: Իրանով Բ. Առաքելյանի մենագրությունը դարձել է առավել ամբողջական, լիարժեք և բոլորովին թարմ բոսք՝ հարցին վերաբերող գրականության մեջ: Մանոթ լինելով ֆեոդալական քաղաքի ուսումնասիրությանը նվիրված ընդհանուր գրականության գլխավոր ուսումնասիրություններին, այդ թվում նաև սովետական և արտասահմանյան մասնագետների ներդրումներին, հեղինակը մատնանշել է նրանց մեջ որոշ առումով միակողմանիության, ոչ ճիշտ մեկնաբանությունների առկայությունը, ընտրել է առողջ և օգտակար հայացքները և լրացրել դրանք նոր մեկնաբանություններով ու հարցադրումներով: Այս առումով անհարկի շերտ լինի բերել մի երկու օրինակ: Ինչպես հայտնի է, ֆեոդալական քաղաքի ծագման խնդրում եղել են բազմապիսի հայացքներ, որոնք այդ երևույթի հիմքում որպես որոշիչ գործոններ ճանաչել են մերթվառչա-տնտեսական իրավական ինստիտուտները, մերթ շուկայական, առևտրական հարաբերությունները (փոխանակային տեսություն), մերթ ֆեոդալական կալվածքի ձևավորումը և նման այլ երևույթներ: Հայկական ֆեոդալական քաղաքների ծագումն ըստ Հ. Մանանդյանի պայմանավորված է եղել հատկապես միջազգային տարանցիկ առևտրով: Բ. Առաքելյանը չի բերազնահատելով այդ և նման գործոնների մի մասի դերը ֆեոդալական քաղաքների ծագման և զարգացման գործում, իրավացիորեն գտնում է, որ ամենազիսավոր գործոնը պետք է տեսնել սոցիալ-տնտեսական նոր հարաբերությունների հանրագումարի, հասարակական նորոգակ տեղաշարժերի մեջ: Ըստ որում, նա տարբերում է վաղ ֆեոդալիզմի շրջանը զարգացած ֆեոդալիզմի շրջանից, շեշտը դնելով վերջինիս վրա և բացահայտելով նրա էությունն ու տարբերիչ գծերը:

«Հայաստանի միջնադարյան քաղաքների առաջացման պատճառներն», ըստ Բ. Առաքել-

յանի, հանդիսացան «երկրի տնտեսական վերելքը, արտադրողական ուժերի աճը, աշխատանքի հասարակական այն մեծ բաժանումը, որը դրսևորվեց արհեստագործության և առևտրի անջատումով երկրագործությունից, որը տեղի ունեցավ ավելի լայն հիմքերի վրա, քան առաջ: Արհեստը և առևտուրը զարգանալով և լաղաքներում կենտրոնանալով, աշխատանքը ինքնուրույն բնագավառ և զգալի թվով բնակչության ապրուստի միջոց դարձան» (հատոր առաջին, էջ 70): Այս հիմնական գործոններից բացի, հեղինակը ուշադրություն է հրավիրում նաև ուրիշ հանգամանքների վրա, որպիսիններից են գյուղացիության ծանր վիճակը և ճորտացումից խուսափող գյուղացիների փախուստը քաղաք, օտար բռնակալության լծից ազատագրվելուց հետո ստեղծված բարենպաստ պայմանները, միջազգային առևտուրը և այլն: Այս առումով մենագրության համար ելակետային նշանակություն է ստացել ստրկատիրական և ֆեոդալական շրջանների քաղաքների որակական տարբերակման անհրաժեշտությունը: «Հայաստանի քաղաքների զարգացումը մինչև վերջերս դիտվել է իրրև մի միասնական պրոցես — իրավացիորեն գրում է հեղինակը, — որը միայն խոշոր տատանումներ և ելևէջներ է ունեցել: Անտեսվել է Հայաստանի հին և միջնադարյան քաղաքների միջև եղած որակական տարբերությունը և միջնադարյան մի շարք քաղաքներ համարվել են սոսկ վերածնված հին քաղաքներ» (նույն տեղում, էջ 32):

Համանման առողջ և ինքնուրույն մեկնաբանությամբ են շնչում նաև հայկական ֆեոդալական քաղաքների անկման երևույթին նվիրված էջերն ու հայացքները: Այստեղ էլ, ըստ հեղինակի, որոշիչ գործոնը երկրի սոցիալ-տնտեսական հարաբերություններն են եղել: Հայաստան ներխուժած նոր տիրողները՝ մոնղոլ-թաթարական ցեղախմբերը, երկրին պարտազրկեցին արտադրության իրենց եղանակը, տնտեսական ավելի ցածր մակարդակով, զարգացած հարաբերությունները կազմալուծվեցին, տեղի տալով որակական նոր, հետադիմական փոփոխությունների: Բացի դրանից, խոշոր դեր խաղացին մոնղոլական արշավանքներին ուղեկցող կոտորածները, ավերումները, արտագաղթերը և հարկային ու վարչական ծանր քաղաքականությունը: Այս ամենի հետևանքով հիմնական արտադրողներից վերցնում էին ոչ միայն հավելյալ, այլև անհրաժեշտ արդյունքը, որով անհրաժեշտ դարձավ ընդլայնված վերարտադրությունը և անխուսափելի՝ մոնղոլական տիրապետության ենթակա երկրների տնտեսական զահաված անկումը:

Քանի որ մենագրության գլխավոր առարկան IX—XIII դարերի հայկական քաղաքներն են, ուստի հեղինակը չէր կարող որևէ եղանակով ցույց չտալ այդ քաղաքների ընդհանուր պատկերը: Ըստ որում, կամենալով ընդգծել քաղաքների զարգացման երկու փուլերը, հեղինակը IX—XI դարերին վերաբերող տվյալները եւրկայացրել է աշխատության առաջին հատորում, իսկ XII—XIII դարերին՝ երկրորդ: Յուրաքանչյուր քաղաքին հատկացված է հատուկ տեղ՝ համապատասխան խորագրով: Ուրբան հայտնի է մեզ, նման աշխատանք կատարվում է առաջին անգամ, և այստեղից է, որ որոշակի պատկերացում ենք կազմում մեր միջնադարյան քաղաքների ընդհանուր ցանկի, նրանց ծագման, զարգացման և կյանքի այլ կախոր հանգամանքների մասին: Առանձին արժեք են ներկայացնում համապատասխան քարտեզը (հատոր I, էջ 128—129-ի միջև) և տախտակը (հատոր I, էջ 124): Վերջինից տեղեկանում ենք, որ մինչև IX դարը Հայաստանում եղել են ընդամենը 4 քաղաք, IX—X դարերում առաջացել են ևս 20 քաղաք և 6 գյուղաքաղաք, X դարում՝ ևս 10 քաղաք և 11 գյուղաքաղաք, XI դարերում՝ 8 քաղաք և 5 գյուղաքաղաք, XII դարում՝ 4 քաղաք և 1 գյուղաքաղաք, իսկ XIII դարերում՝ 4 քաղաք և 4 գյուղաքաղաք: Անշուշտ, հետագա լսանքակրկիտ որոնումները կարող են որոշ ձգարտումներ մտցնել նշված թվերի մեջ, սակայն դրանից իրերի ընդհանուր վիճակը էական փոփոխության չի կարող ենթարկվել: Իսկ այդ վիճակը ցույց է տալիս անցյալի հայ իրականության այն կարճ հատվածի զարգացման ընդհանուր պատկերը, երբ ֆեոդալական քաղաքի ձևավորումը և քաղաքային շինարարությունն իր ծաղկման գագաթնակետին էր հասել: Անիմաստ կլիներ պահանջել հեղինակից նշված քաղաքներից յուրաքանչյուրի մանրամասն պատմությունը, որը բազմաթիվ հատորների նյութ կարող է դառնալ, ինչպես ցույց են տվել Անիին, Դվինին, Երևանին նվիրված ուսումնասիրությունների փորձերը: Հեղինակը սույատակ է ունեցել քննարկելու միջնադարյան ֆեոդալական քաղաքի պրոբլեմը ամբողջովին վերցրած, իր բոլոր չիմնական կողմերով, բոլոր քաղաքների և քաղաքային արտադրության և կյանքի եղելությունների բազմակողմանի վերլուծությամբ: Հեղինակի համար առաջնայինը այդ քաղաքների ներքին կյանքի, առօրյայի, դասակարգային ու դասային կազմի, նրանց զբաղմունքի և փոխհարաբերությունների ուսումնասիրության խնդիրն է եղել:

Քափանցելով ֆեոդալական Հայաստանի շահկող ու բարգավաճող քաղաքային կյանքի

նյութաշարհը, հեղինակն իրավացիորեն առաջին հերթին կանգ է առնում արհեստավորական զանգվածների զբաղմունքի, արտադրության կազմակերպման և հարակից այլ խնդիրների վրա: Ըստ որում, նա այդ նպատակին հատկացնում է առաջին հատորի ամբողջ երկրորդ բաժինը (էջ 129—353) և երկրորդ հատորի մի գլուխը (էջ 174—205): Առաջին հատորի համապատասխան մասում ներկայացվում են քննվող իրականությանը վերաբերող բոլոր արհեստները իրենց ճյուղերով, հետևյալ խմբավորմամբ. «Մետաղագործություն», «Քարի և փայտի մշակում», շինարարական արհեստներ», «Կավագործություն և ապակեգործություն», «Երթմուտքների, զորգերի և կաշվեղենի արտադրության հետ կապված արհեստներ», «Երթի և զրչության հետ կապված արհեստներ» և «Այլ արհեստներ»: Այս վեց խմբերում համարյա սպառիչ կերպով ընդգծված են միջնադարյան Հայաստանի բոլոր արհեստներն ու համանման զբաղմունքները: Հավաքված է հսկայական նյութ՝ ինչպես տպագրությամբ հայտնի տարրեր աղբյուրներից, այնպես էլ առաջին անգամ օգտագործվող թանգարանային, արխիվային, ձեռագրական ֆոնդերից և այլ աղբյուրներից: Հեղինակը կարողանում է ցույց տալ նյութերը ոչ միայն մասնագիտորեն համախմբել, խոսեցնել, այլև հաճախ մտնել բաժանվածի մեջ, կատարելով մեծարժեք ճշգրտումներ, լրացումներ: Առանձին արժեք են ներկայացնում այս նյութերին կից արված տեսական այն ընդհանրացումները, որոնք վերաբերում են ինչպես ֆեոդալական, այնպես էլ ստրկատիրական շրջանների արհեստների բնութագրմանն ու տարբերություններին: Այստեղ բարձրացված է նաև մի կարևոր խնդիր՝ աշխատանքի կազմակերպման գործը արհեստագործության բնագավառում, որը, սակայն, հանգամանորեն քննարկված է մենագրության հաջորդ հատորում՝ «Արհեստավորական Երթայությունները (համարություններ) միջնադարյան Հայաստանի քաղաքներում» ընդհանուր խորագրի տակ: Առաջնորդվելով մարքսիզմ-լենինիզմի ելակետային դրույթներով, հեղինակը համբարությունները դիտում է որպես արհեստի ֆեոդալական կազմակերպություն և աշխատանքի բաժանման մի ձև՝ ծնված հատկապես քաղաքների ծաղկման ու զարգացման շրջանում: Ընդհատ է, համբարությունների մասին բավականին շատ է խոսվել նաև մեզ մոտ, սակայն ցարդ, կարեւոր տեղեկությունների չզուլության պատճառով, նրանց գոյության հարցը մնում էր թեական և մենք այնքան էլ հստակ պատկերացում ունենինք նրանց մասին: Ի. Առաքելյանը, իրավացիորեն, հատուկ ուշադրություն է հրավիրում

Պվինի. Անիի և այլ քաղաքների պեղումներից երևան եկած, սկզբնաղբյուրներում պահպանված այն վկայությունների վրա, որոնք հավաստում են այդ քաղաքներում արհեստի տարրեր ճյուղերի հետ կապված առանձին փողոցների կամ թաղամասերի առկայությունը: Այսպես, բրինակ, «Բագզնոցն», «Սառածփողոցը», «Կոշկակարոցը», «Դարրնո փողոցը», «Գտակարոցը» և այլն Անիում՝ հիմք են տալիս հեղինակին ենթադրելու, թե նման դեպքերում գործ ունենք առանձին արհեստների ոչ միայն բոլոր փողոցների համախմբվածության, այլև համաբնությունների մեջ ներգրավված լինելու երկուսի հետ: Նույն նպատակով նա որոնումներ է կատարել ժամանակի գրականության և հատկապես առակագրության մեջ, վեր հանելով ուղղակի և անուղղակի համոզիչ փաստեր: Այդ և այլ վկայությունների հիման վրա նա գտնում է, որ համաբնությունները հայկական քաղաքներում պիտի սկզբնավորված լինեին IX—X դարերում: Ե. Առաքելյանը վկայակոչում է Երզնկայի Եղբայրության 1280 թ. գրված «Սահմանք»-ը, հրատարակված է. Խաչիկյանի կողմից. ուր շոշափելի նյութ կա Եղբայրությունների մասին: Այնուհետև նա հիմնական գծերով պատկերում է համաբնությունների ներքին կառուցվածքը, փոխհարաբերությունները, նրանց նաև դրական միավորների բնույթ ունենալը, իրադրացած հասարակական դերը քաղաքային առօրյայում, նրա մշակույթի ստեղծման գործում և այլն: Այս բնդհանուր ֆոնի վրա ավելի քան հասկանալի են դառնում, օրինակ, Անիի, Սրժնի աշխատավոր բնակչության կազմակերպված ելույթները՝ օտար նվաճողների դեմ հստակապես այն օրերին, երբ քաղաքները կորցրել էին իրենց ֆեոդալ ղեկավարներին կամ էրբ վերջիններիս մեջ չի նկատվել դիմադրության ցանկություն: Այդպիսի կազմակերպվածությունը, վճռականությունը պայմանավորված էլիտի լինելը, առաջին հերթին, համարական կազմակերպությունների առկայությամբ:

Մենագրության արժեքավոր գլուխներից մեկը նվիրված է ապրանքային արտադրության և առևտրի զարգացման հարցերի ուսումնասիրությանը, որոնք ավելի քան մոտիկից են շոշափում քաղաքային կյանքի առօրյան ու նրա մեջ ստեղծված հարաբերությունների բարդացումը: Հեղինակը նկատում է, որ ցարդ առևտրի հետ կապված խնդիրներն ուսումնասիրելիս մեզ մոտ մասնագետները «գլխավոր ուշադրությունը դարձրել են տարանցիկ առևտրի վրա», համարյա շրջանցելով ներքին առևտուրը, մինչդեռ ֆեոդալական քաղաքի զարգացման որոշիչ գործոններից մեկը հանդիսացել է ոչ

այնքան արտաքին, որքան ներքին առևտուրը: Անդրադառնալով վերջինիս ծագմանն ու զարգացմանը, հեղինակը տեսնագիտական առումով, որպես հիմք, բնդունում է արհեստագործության՝ երկրագործությունից անջատվելու և քաղաքներում կենտրոնանալու երևույթը, որը անջատեց նաև քաղաքը գյուղից, միաժամանակ նրանց իրար հետ կապելով ապրանքափոխանակությամբ: Արհեստների մասնագիտացմանն ու զարգացմանը զուգընթաց, որը ձգտում էր բավարարել քաղաքի և գյուղի բնակչության կոտորակվող ու բազմացող շերտերի բոլոր պահանջները, ծնվում և զարգանում է նաև ներքին առևտուրն իր տարատեսակներով: Քաղաքներում առևտուրը կատարվում էր ինչպես արտադրական առանձին օջախներում, արհեստավորական շենքերում, փողոցներում, շուկաներում, այնպես էլ շրջիկ վաճառողների միջոցով: Հետզհետե հիմքեր են ստեղծվում արհեստագործության տեխնիկայի զարգացման, ապրանքների առավել նուրբ ու բազմազան արտադրության և առևտրական ցանցի լայնացման համար: Այս ամենի շնորհիվ, պատմիրատուի պահանջով և հաճախ նրա նյութով, առանձին առարկաների արտադրությունը աստիճանաբար տեղի է տալիս շուկայի համար ավելի մեծ քանակությամբ ապրանքների արտադրությանը: Ցույց է տրվում, թե ինչպես արհեստավորական արտադրանքին զուգընթաց, վաճառքի առարկա են դառնում տները, կուղպակները, ձիթհանքները, հյուրատները, այգիները, պարտեզները, սնունդը, կիսամթերքների զանազան տեսակները և այլն: Առևտրական այդ հարաբերությունների պատճառով հանդես են գալիս շուկաների հսկիչները, տեսուչները և այլ պաշտոնյաներ: Ուշադրություն է հրավիրվում նաև կիրակնօրյա և հաճախ էլ՝ ավելի երկարատև կազմակերպված տոնավաճառների վրա, որոնք իրենց ճոխությամբ խոսում են զարգացած ներքին առևտրի մասին: Այս բնթացքը տանում է նաև դեպի ապրանքների արտահանումն ու արտաքին առևտուրը: Սույն բնդհանուր հիմքի վրա էլ, ահա, բացահայտվում է Հայաստանի՝ միջազգային առևտրական կապերում ունեցած դերի աշխուժացումն ու վերելքը IX—XIII դարերում: Մենագրության մեջ բավականին հանգամանորեն ցույց են տրվում արտաքին առևտրի կենտրոնները, ուղիները, արտահանվող և ներմուծվող ապրանքների տեսակները, ինչպես և Հայաստանում ստեղծված առևտրական հատուկ իջևանները, խանապարները:

Ապրանքային արտադրության և առևտրի զարգացումը աստիճանաբար տանում է դեպի դրամական շրջանառության ոլորտը, վերջինիս

ժուրտակումը առանձին անհատների ձեռքում և նրանց կազմակերպած այնպիսի խոշոր առևտրական գործարքները, ինչպիսիք էին հողային խոշոր տարածությունների, գյուղերի, բերդերի, բնդհուպ մինչև քաղաքների առ ու ծախսը Ըստ այդմ էլ մշակվում են դրամափոխությունների, վաճառության, վարձակալության, կապալառության հղանակները, մինչև իսկ «բանկային գործարք հիշեցնող» երևույթները: Այս ամենը ենթադրում են զարգացած ֆեոդալիզմի ընդհանրում ձևավորված հասարակական նորորակ ու բարդ հարաբերություններ, որոնց հեղինակն ավելի հանգամանորեն անդրադառնում է մենապրության 12 և 14-րդ գլուխներում, խոսելով չաղաքային բնակչության սոցիալական և վարչական կառուցվածքի, ներքին փոխհարաբերությունների և դասակարգային պայքարի սրման մասին:

Այստեղ, նախ, առանձին խմբավորմամբ, ներկայացվում են քաղաքային բնակչության բարձր խավերը՝ հակիրճ և փաստալից բնութագրմամբ: Այդպիսիք են, ֆեոդալական հասարակարգի դասային կազմի բաղկացուցիչ տարրերից, ազնվականությունը, հոգևորականությունը, գինվորականությունը՝ իրենց ենթաբաժանումներով: Հեղինակը հատուկ ուշադրություն է նվիրում բուն քաղաքային վերնախավի, այսպես կոչված, մեծատունների երևան գալուն և նրանց տնտեսական ուժին ու դերին: Բերված հարուստ փաստերն իրենց մեկնարանությունները առաջին ամրոցական խոսքն են իր ժամանակի համար խիստ ուշագրավ քաղաքային: հասարակության այդ հատվածի մասին: Այստեղ դիտողություններ են արված Ի. Պետրուշևսկու, ինչպես և Ն. Մառի, Վ. Չալոյանի մեծատունների սոցիալական էությանը տրված մեկնարանությունների կապակցությամբ, որոնք սակայն, մեր կարծիքով, կարոտ են ավելի հիմնավոր փաստարկումների:

«Քաղաքի ստորին խավերը» ենթախորագրի տակ ներկայացված են արհեստավորները, մանր առևտրականները, հողագործները, վարձկանները, ճորտերն ու մշակները, ստրկության գերապրուկային վիճակում գտնվող ծառայողներն ու աղախիները և ունեւրկվածների այլ խավերը, որոնք իրենց ամրոցությամբ, բարձր խավերի հետ միասին, լրացնում են քաղաքային բնակչության խայտարղետ ու բարդ պատկերը: Այս իրադրությունն է ահա, որ պայմանավորել է քաղաքային կյանքի ընդհանրում մարմնավորվող հասարակական նորորակ երևույթները, սոցիալական հարաբերությունների խճողումները, դասային ու դասակարգային հակասությունների սրումը, ուժի և իրավունքի, ապրանքի և դրամի ձեռք բերած նոր իմաստը

և այն ամենը, որ որոշ մասնագետների կողմից դիտվում է որպես զարգացած ֆեոդալիզմի շրջան, իսկ որոշ մասնագետների կարծիքով էլ՝ դեպի կապիտալիստական հարաբերությունները կատարված մի քայլ, կապված Վերածնունդի հասկացողության հետ: Հեղինակին, սակայն, այստեղ այս բանավեճի մասնագիտական քննությունը չի գրադեցնում, ուստի նա անցնում է քաղաքային ներքին կյանքի պատկերն ամրոցացնող այլ երևույթների և հասարակական հասկացողությունների քննությանը:

Բուրժուզիկն թարմ խոսք է ասված «Քաղաքային վարչություն և ինքնավարություն» ենթախորագրերի տակ: Հեղինակն այստեղ հետամուտ է եղել պարզելու, քննված ժամանակներում եղալ է արդյոք քաղաքային ինքնավարություն, եթե այո, ապա ինչպիսի՞ն է եղել սյն: Ինչպես հայտնի է, անցյալում այս հարցերը քննության առարկա լինելով, տարբեր լուծում են ստացել: Այսպես, օրինակ, բոտն Մառի, քաղաքային ինքնավարություն չալաստանում եղել է և այն դրսևվորվել է հասուկ ավագանու գլխավորությամբ, որը կոչվել է «երիցանի»: Ըստ Ն. Մանանդյանի, միջնադարյան քաղաքները դեկավարվել են սենյորալ կարգով: Բ. Առաքելյանը, վերանայելով այս հարցերը, դրանք դիտում է զարգացման և փոխակերպությունների պրոցեսում: Եթե IX—X դարերում քաղաքները գերազանցապես սենյորալ էին, ապա ավելի ուշ համարյա ամենուրեք ձևավորվում է քաղաքային ինքնավարությունը, որը տարբեր քաղաքներում երևան է դալիս առավել կամ նվազ զարգացած ձևերով: Միայն թե վերջիններս դրսևորվել են ոչ թե որպես «երիցանի», այլ «ավագանի»: Համոզիչ է հեղինակի փաստարկումը «երիցանի»-ների մասին՝ երեց-հոգևորական մեկնարանությամբ, որը կապ չի ունեցել ինքնավարության հետ: Նույնքան փաստալից ու համոզիչ է նաև քաղաքային «ավագանու» գլխավորաց», որպես քաղաքային ինքնավարությունը ներկայացնող միավորի մասին հայտնած կարծիքը:

Գալով քաղաքային աշխատավորության կեղևվածությանն ու սոցիալական պայքարի սրման հարցերին, հեղինակը գտնում է, որ քննվող ժամանակաշրջանում քաղաքային աշխատավորության ուսերին ծանրացած են եղել, գյուղացիների համար սահմանված հարկերից բացի, նաև առանձին հարկեր, հատուկ պարհակային պարտավորություններ և շահագործման այլ եղանակներ:

Հարուստ փաստերով բացահայտված է տարբեր խավերի տնտեսական և իրավական վիճակի պատկերը, նրանց միջև եղած տարբերությունները, հակասությունները, ինչպես նաև

աշխատավոր զանգվածների ինքնագիտակցության արթնացումը, դժգոհությունը և սոցիալական պայքարի մեջ ընդգրկվելը, պայմանավորված նրանց անլուր կեղևավածությամբ ու անշահաձեռնությամբ: Ե՛վ մեկի, և՛ մյուսի համար շահաված են շավարար փաստեր պատշաճ մեկնարանություններով: Հեղինակին այստեղ սաջողվել է ճշգրտումներ մտցնել նաև մի շարք չարկերի, տուրքերի անունների և սոցիալական բովանդակություն ունեցող այլ տերմինների համաստի մեջ: Մենագրությունն ավարտվում է քաղաքների անկման պատմությանը նվիրված ինքնատիպ ու մեծարժեք ուսումնասիրությամբ, ուրի մասին խոսվեց վերևում:

Աշխատությունը մեծապես շահել է ինչպես քաղաքության ընթացքում, այնպես էլ հատորչելի վերջերում զետեղված և բավականին հաջող վերարտադրված նկարների առկայությամբ: Կյանք նպաստում են միջնադարյան Հայաստանի քաղաքային կյանքի և նրա նյութական հարուստ մշակույթի մասին որոշակի գաղափար կազմելուն:

Մեր կարծիքով Բ. Առաքելյանի սույն մենագրությունն ունի նաև որոշ թերություններ և վերանայման կարոտ առանձին կետեր:

Նյութի և ժամանակի ընդգրկման առումով չի պատճառարանված Կիլիկյան Հայաստանի քաղաքների և նրանց կյանքի ուսումնասիրության շտաբները: Մինչդեռ քննվող խնդրի անբաժանելի և կարևորագույն հատվածներից մեկն է դա, հարուստ պեղծախոս փաստերով և ինքնատիպ օրինակաբանությամբ: Մանավանդ որ հեղինակը հաճախ է դիմում կիլիկյան հեղինակներին, օրինակ՝ Ներսես Շնորհալուն («Թուղթ ընդհանրական»), որոնց խոսքը, ամենից առաջ, վերաբերում է Կիլիկիայի բնակչությանը: Կրանով հնարավորություն կստեղծվեր Հայկական միջնադարյան քաղաքների պատմությունը ավելի լիարժեք դարձնելու նաև ժամանակագրական առումով, այն հասցնելով մինչև XIV դարի վերջերս:

Աշխատությունն ավելի կշահեր, եթե քաղաքների նկարագիրը տրվեր միանգամից և ոչ թե մասամբ առաջին հատորում, մասամբ՝ երկրորդ: Կրանով նույն քաղաքին հեղինակն անդրադարձել է երկու անգամ, մասնատելով նյութը, որն առանց այդ էլ տրված է սեղմ ու ընդհանուր գծերով: Նույնը կարելի է ասել նաև արհեստների հետ կապվող հարցերի թննության վերաբերյալ, որոնց հեղինակն անդրադարձել է և՛ առաջին հատորի երկրորդ մասում, և՛ երկրորդ հատորի տարբեր գլուխներում:

Ճիշտ է, հեղինակի ծրագրից դուրս է եղել հոգևոր մշակույթի, ճարտարապետության և հարակից բնագավառների թննությունը, որն իրոք

առանձին խնդիր է. սակայն, այդուհանդերձ, աշխատությունը մեծապես կշահեր, եթե հատուկ գլուխ նվիրվեր նրանց ամբողջությանը, առանց որի նման մենագրությունները միշտ էլ պակասավոր կմնան: Մտնելով հայկական միջնադարյան քաղաքների ծագման ու զարգացման պատմա-քաղաքական և սոցիալ-տնտեսական բոլոր խնդիրների մեջ, բախվելով արհեստագործության հրաշալիքների թննությանը, քաղաքային կյանքի ձևած նոր աշխարհընկալմանն ու նոր ճաշակին, չես կարող չպահանջել նաև զեթ ընդհանուր խոսք՝ մանրանկարչության, ճարտարապետության, զեղարվեստական գրականության և նման այլ բնագավառների մասին: Մեր կարծիքով, միանգամայն տեղին կլիներ լսել նաև հեղինակի որոշակի խոսքը հայկական Վերածնունդի պրոբլեմի վերաբերյալ, որին նա անդրադարձել է լուրջ ակնարկներով: Հենց այդ պրոբլեմի նկատմամբ բռնելիք ճշգրտված դրոբր առիթ կհանդիսանար քննվող որոշ նյութերն ավելի քան բազմակողմանիորեն վերլուծելու, խորացնելու:

Նկատվում է, որ երբեմն, անկախ իր կամքից, հեղինակն ընկնում է այնպիսի վիճակում, ուր նրան պակասում են որոշակի և հավաստի փաստերը: Նման դեպքերում նա աննկատելիորեն անցնում է, այսպես կոչված, «ակադեմիական ոճին», տալով ընդհանուր բացատրություններ, որով չապացուցվածը ներկայացվում է որպես իրողություն: Նման անցումներով լրացված էջերը անհարիրություն են մտցրել ընդհանրապես փաստահարուստ այս մեծարժեք մենագրության մեջ:

Առհասարակ ողջունելի երևույթ է, որ վերջին տարիներս թեկուզ և զգալի ուշացումով, հաջ պատմարանները, ազգագրագետներն ու արվեստագետները փորձում են անդրադառնալ նաև մեր ժողովրդի կյանքում, նրա քաղաքային և առևտրական առօրյայում այնքան մեծ դեր խաղացած Խլրայրությունների մասին եղած նյութերի ուսումնասիրությանը: Բ. Առաքելյանն առանձնապես է սրել այս խնդիրը: Սակայն նկատելի են մասնակի անորոշությունները Այսպես, տեսնում ենք, որ նա փորձում է Սուրաբուրյուն և Համբարյուն հասկացողությունները նույնացնել, կազմելով այսպիսի խորագիր. «Արհեստագործական եղբայրությունները (համքարություններ) միջնադարյան Հայաստանի քաղաքներում»: Ընթացքի մեջ, սակայն, նա հիմնականում դրանք տարբերում է միմյանցից, հասնելով նույնիսկ նրանց ծագման մասնակի շուրջ եղած որոշ կարծիքների թննությանը: Այս առումով անհարկի չէր լինի հիշել հետևյալ տողերը, ուղղված Վլ. Բորդյևսկու համապատասխան կարծիքի դեմ. «Չենք կարող շտաբակել նր-

լան այն շարքում, ինչ ներառություններն են ազդել համբարությունների վրա: Բրավացի կլիներ հակառակը պնդել, թանի որ «սինֆերթ», այսինքն համբարությունները, օրինաչափ երկվայթ էին ֆեոդալական թաղաթի համար, ավելի վաղ առաջացան և նախադրյալներ ստեղծեցին ու օրինակ ծառայեցին ֆեոդալների և ախիների (այսինքն՝ եղբայրությունների—Ա. Մ.) համար» (Երկրորդ հատոր, էջ 191): Այսպիսով այս հասկացողությունները, որոնք խորագրում նույնացված են, այստեղ արդեն դիտվում են որպես առանձին միավորներ: Եացի դրանից, եթե խոսքն առհասարակ եղբայրությունների ծագման մասին է, ապա նրանց արմատները գնում են թաղվելու ոչ թե ֆեոդալական ծաղկող թաղաթների, այլև նախաֆեոդալական ժամանակների հեռավոր ծայրերում: Ինչ վերաբերում է ֆեոդալական թաղաթների ծագման շրջանում այդ եղբայրությունների ընդունած կերպարանափոխությանն ու համբարությունների հետ ունեցած փոխհարաբերություններին, դա տվյալ դեպքում չի բերված և կարոտ է հատուկ ուսումնասիրության:

Մենագրության մեջ նկատվում են նաև առանձին վրիպակներ, անճշտություններ, որոնք, սակայն, շոշափելի որակ չեն կազմում:

Ե. Առաքելյանի աշխատության մեջ է, որ վերջապես ի մի են խմբված միջնադարյան Հայաստանի թաղաթներին ու արհեստները վերաբերող համապատասխան բոլոր նշանակալից փաստերը, հետադոտողների եզրակացությունները՝ լրացված, ճոխացված, ճշգրտված, զարգացված հեղինակի ինքնատիպ մեկնաբանություններով, հայտարարած փաստերով և գիտական ընդհանրացումներով: Ամենից կարևորը, սակայն, այն ընդհանուր կոնցեպցիան է՝ ընկած այդ բոլոր փաստերի և եզրակացությունների հիմքում, որն իր ամբողջությամբ մշակվել է առաջին անգամ, և որի օգնությամբ վեր է հանված հայ ժողովրդի պատմության ու մշակույթի մի ամբողջ բնագավառ:

Այդ արժեքավոր մենագրությունը օգտակար է ոչ միայն պատմաբանների, այլև գրականագետների, արվեստագետների, ազգագրագետների, տնտեսագետների և առհասարակ հայագիտության բոլոր ասպարեզների մասնագետների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանների համար:

Պատմ. գիտ. դոկտոր Ա. ՄՆԱՑԱՎԱՆՅԱՆ

Կ. Վ. ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ. Անաճիա դիցուհու պաշտամունքը, Հայկ. ՍՍՌ-ԳԱ հրատարակչություն, Երևան, 1963, 163 էջ, գինը 55 կոպ.:

Անաճիա դիցուհին հայ Նեոստասիկան աստվածների պանթեոնում առաջնակարգ տեղ էր զբաղում: Նրա նախատիպը ծնունդ է առել մաշրական տունի շրջանում և իրեն ստեղծող հասարակության նման անցել է զարգացման մի շարք շրջաններ: Հին Հայաստանում Անաճիա որ համարվում էր «Մայր Հայաստանյայց» խոշորագույն աստվածուհի: Այն լիովին համեմատվում է Առաջավոր Ասիայի ընդհանրական Անաճիայի, ասորա-բաբելոնական Էշտարի, հունական Արտեմիդի, հին հռոմեական Գիանայի և այլ նշանավոր աստվածուհիների հետ:

Գրախոսվող գրքի հեղինակը բազմակողմա-կորեն քննության է առել Անաճիայի պաշտամունքի ծագումն ու զարգացումը և, ի վերջո, աստվածուհու մուլումբը քրիստոսածին Մարիամին: Իր առջև դրված հարցի կարևորությունն ու բարդությունը հաշվի առնելով, հեղինակն օգտագործել է այն սկզբնաղբյուրները, որ մեղ են հասել անտիկ գրականության և հայ մատենագրության միջոցով, միաժամանակ մեջ բերելով նոր նյութեր: Այսպես, նա օգտագործել է

հայկական միջնադարյան գրամաների և ազգագրության ու բանահյուսության բնօրինակ աղբյուրները, որոնք կապված են Անաճիայի հետ: Ամփոփ կերպով ներկայացնելով հայ Նեոստասիկան դիցարանը, որ Արաաշխայան հարթության շրջանում հասել էր կատարյալ մաս-վորման, հեղինակը ցույց է տվել Անաճիայի՝ իրեն մայր աստվածուհու, տեղն ու գեղը նրա մեջ: Նա այս դիցարանը քննության է առել Նեոստասիկան Հայաստանի սոցիալ-տնտեսական ու թաղաթական պայմանների քննադրության հիման վրա, ինչպես նաև Առաջավոր Ասիայի տնտեսական ու կուլտուրական պայմանները հաշվի առնելով: Անցնելով Անաճիայի բուն էության քննությանը, հեղինակը նախ ներկայացնում է դիցուհու անվան ծագման հետ առնչվող բանասիրական վեճերի պատմությունը: Գրանից երևում է, որ այդ հարցը տակավին լուծված չէ: Բանասերները Անաճիա անունը մերթ ժազդեսում են պարսկերեն Anahita տեմեանունից, մերթ բաբելոնական աստվածուհի Anunitu-ից և ասորեստանյան Անատու անունից: Այս վերջինի հա-